Ազգային ժողովի պատգամավոր
Վաղարշակ Հակոբյանից

HETQ.am-ի լրագրող Տիրայր Մուրադյանին

Հարգելի՛ պարոն Մուրադյան,

Ի պատասխան Ձեր 02.04.2024 թվականի հարցման՝ հայտնում եմ հետևյալը.

1. Ծաղկաձոր համայնքի Պահլավունյաց 73 հասցեում գտնվող հողամասը ենթադրաբար «Սատուրնավան» ՍՊԸ-ի կողմից ձեռք բերվելու հարցում ԱԺ պատգամավոր լինելու գործոնս դեր չի ունեցել և չէր էլ կարող ունենալ:

2. Ես որևէ տեղեկություն չունեմ Ծաղկաձոր համայնքի Պահլավունյաց 73 հասցեում գտնվող հողամասի ենթադրյալ օտարմանն առնչվող հարցերի (այդ թվում նաև՝ դրա գնի) վերաբերյալ: Ծաղկաձոր համայնքի Պահլավունյաց 73 հասցեում գտնվող հողամասի ենթադրյալ օտարմանն առնչվող հարցերի (այդ թվում նաև՝ օտարման գնի և դրա շուկայական գնի ենթադրյալ տարբերության) մասին տեղեկություններ կարող եք ստանալ այդ գործարքի՝ Ձեր վկայակոչած կողմերից՝ Ծաղկաձոր համայնքից և «Սատուրնավան» ՍՊԸ-ից:

3. Ես որևէ ներգրավվածություն չունեմ Ծաղկաձոր համայնքի Պահլավունյաց 73 հասցեում գտնվող հողամասի ենթադրյալ գնման և կառուցապատման ծրագրում:

4. Նշեմ նաև, որ ես որևէ ձեռնարկատիրական գործունեությամբ չեմ զբաղվում: Իմ կողմից ենթադրյալ առևտրային կազմակերպության հիմնադրումը և այդ կազմակերպության կողմից հողամասի ենթադրյալ ձեռքբերումը չեն կարող վերագրվել ինձ և դիտարկվել որպես պատգամավորին Սահմանադրության 95-րդ հոդվածով ներկայացվող անհամատեղելիության պահանջների խախտում:

Հարգանքով՝ ***Ազգային ժողովի պատգամավոր***
Վաղարշակ Հակոբյան

02.04.2024 թվական